ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

09.03.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ս.Սարգսյանը - մարզպետի խորհրդական
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ադամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Շիրինյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Լ.Մաթոսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բեջանյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**

   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/

2. **Այլ հարցեր**:

ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը շնորհավորեց մարզպետի աշխատակազմի կանանց Մարտի 8-ի տոնի կապակցությամբ՝ ցանկանալով առողջություն, հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում, նա նաև շնորհավորեց մարզպետի խորհրդական Ստեփան Սարգսյանին՝ պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկացավ արդյունավետ աշխատանքային գործունեություն՝ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն:

1. **Լոռու մարզպետը հանձնարարեց աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին.**

Ակտիվություն և նախաձեռնողականություն դրսևորել տրված հանձնարարականների և սահմանված գործառույթների պատշաճ կատարման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում ներկայացնել դրանցից բխող և դրանցով պայմանավորված առաջարկություններ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝

2.1 Լոռու մարզի համայնքների Ավագանու նիստերի հրավիրման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետներում ներկայացնել Լոռու մարզպետին.

2.2 Ներկայացնել առաջարկություններ մարզի խորհրդի նիստ հրավիրելու և օրակարգային հարցերի քննարկման վերաբերյալ:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99